ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<03>> ----հուլիս----2025թ. N ՄՈ/630 -Ա

ք. Արմավիր

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՍՄԲԱՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ, 163-րդ, 164-րդ և 167-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի N ՄՈ/626-Ա որոշումը և Կարինե Սմբատյանի 2025 թվականի հուլիսի 1-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Սմբատյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա տեղափոխված ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 7 աշխատանքային և 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մասը՝ 16 աշխատանքային օր, 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 13-ը ներառյալ՝ 23 աշխատանքային օր տևողությամբ:
2. Կարինե Սմբատյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Հասմիկ Գրիգորյանին:

3. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Հասմիկ Գրիգորյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հունիսի 14-ից օգոստոսի 13-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Կարինե Սմբատյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 14-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ